

ՄԱՐԶԻ ԳԵՏԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77<sup>1</sup>, 77<sup>2</sup>, և 77<sup>3</sup> հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

**որոշում եմ՝**

1. Առաջարկել մարզի Գետիկ համայնքի ղեկավարին՝
  - 1) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը.
  - 2) ընդունվող իրավական ակտերը իրենց կառուցվածքով և իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37, 40, 41-րդ հոդվածների պահանջներին.
  - 3) իրավական ակտերում փոփոխությունները կամ լրացումներն իրականացնել ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, իսկ դրանք ուժը կորցրած ճանաչել նույն օրենքի 72-րդ հոդվածով.
  - 4) խստորեն պահպանել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ավագանու նիստերի գումարման պարբերականությունը՝ ոչ ուշ քան 2 ամիսը մեկ.
  - 5) հաստատել և գործողության մեջ դնել՝
    - ա. աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
    - բ. համայնքային ծառայողների էթիկայի կանոնները.
    - գ. համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը.
    - դ. համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.
    - ե. առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային կանոնները.
  - 6) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2008թ. հունիսի 26-ի N 1 որոշումը.
  - 7) հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով.
  - 8) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ